Հաստատված

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ Տնօրենների խորհրդի

29.07.2024թ. №290724 որոշմամբ

ԿԱՐԳ
«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԱՆՁԱՆՑ, ԱՅԼ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ՝ ԻՐԵՆՑ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿՆՔԵԼՈՒ

1. Կարգավորման առարկան

1. «ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերության ղեկավար անձանց, այլ աշխատակիցների և նշանակալի մասնակիցների՝ իրենց արժեթղթերով գործարքներ կնքելու կարգը (այսուհետ՝ կարգ) սահմանում է «ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ընկերություն) թողարկած արժեթղթերով ընկերության ղեկավար անձանց, այլ աշխատակիցների և նշանակալի մասնակիցների գործարքներ կնքելու գործընթացը կարգավորող ներքին կանոնները:

2. Կարգը մշակված է՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և ընկերության կանոնադրության համաձայն:

2. Հիմնական հասկացություններ

3. Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) Շահակից (Stakeholder)՝ընկերության ղեկավար անձինք, այլ աշխատակիցները և նշանակալից բաժնետերերը.

2) գնային չարաշահումներ՝ ընկերության թողարկած արժեքղթերի գների և (կամ) շուկայի ակտիվության բարձրացման կամ նվազման թվացյալ պատկեր ստեղծելու նպատակով ձեռնարկվող գործողություններ, որոնք ուղղված են ներդրողներին դրդելու գնել կամ վաճառել ընկերության թողարկած արժեթղթերը:

4. Կիրառման շրջանակը

4. Ընկերության ղեկավար անձանց, այլ աշխատակիցների և նշանակալից բաժնետերերի՝ իրենց արժեթղթերով գործարքներ կնքելու կարգը կիրառվում է ընկերության կառավարման մարմինների և շահագրգիռ այլ անձանց կողմից:

5. Գնային չարաշահումներ

5. Շահակիցների կողմից այնպիսի գործարքների կնքումը կամ դրանց կնքման պատվիրումը, որը արժեթղթերի շուկայում կառաջացնի գնային չարաշահումներ, արգելվում է:

6. Գնային չարաշահում է համարվում՝

1) այնպիսի գործարքների կնքումը կամ դրանց կնքման պատվիրումը, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել շուկայում արժեթղթի գնի, դրա նկատմամբ պահանջարկի կամ առաջարկի ծավալի վերաբերյալ սխալ կամ ապակողմնորոշիչ պատկերի ստեղծման կամ ազդակների հաղորդման, բացառությամբ այն դեպքերի, երբ գործարք կնքող կամ գործարքի կնքումը պատվիրող անձը գործել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում.

2) այնպիսի գործարքների կնքումը կամ դրանց կնքման պատվիրումը, որը հանգեցնում է արժեթղթի գնի ոչ օրինաչափ շեղումների կամ արժեթղթի գնի արհեստական մակարդակի սահմանման, բացառությամբ այն դեպքերի, երբ գործարք կնքող կամ գործարքի կնքումը պատվիրող անձը գործել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում.

3) այնպիսի գործարքների կնքումը կամ դրանց կնքման պատվիրումը, որն իրականացվում է կեղծ, անբարեխիղճ կամ թյուրիմացություն առաջացնող և (կամ) ապակողմնորոշիչ մեխանիզմների գործադրմամբ.

4) սույն կետի 1-3 ենթակետերում չնշված, սակայն նույնաբնույթ գործողությունները:

6. Ընկերության արժեթղթերով կատարված գործարքների մասին տեղեկատվության բացահայտումը

7. Շահակիցները պարտավոր են ընկերությանը բացահայտել ընկերության թողարկած՝ իրենց պատկանող արժեթղթերով կատարված գործարքների մասին տեղեկություններ:

8. Շահակիցները պարտավոր են ընկերությանը բացահայտել ընկերության թողարկած արժեթղթերով ցանկացած գործարք, որի շրջանակներում Շահակիցն հադես է գալիս որպես կողմ, Շահակից, միջնորդ կամ ներկայացուցիչ:

9. Սույն կարգի 7-րդ և 8-րդ կետերում նշված տեղեկություններն ընկերությանը տրամադրվում են տվյալ գործարքի կնքման պահից 7 աշխատանքային օրվա ընթացքում:

10. Բացահայտվող տեղեկությունների կազմում են՝

1) գործարքի տեսակը.

2) գործարքի կատարման ամսաթիվը.

3) տեղեկություններ անձի մասին, որը հադիսանում է գործարքի կողմ, Շահակից, միջնորդ կամ ներկայացուցիչ.

4) գործարքի գինը.

5) գործարքի առարկան, այդ թվում՝ քանակ, անվանական արժեք.

6) բորսայի անվանումը, եթե գործարքը կատարվել է բորսայական առևտրի ընթացքում: